Հովհաննես Թումանյան

Ընտրյալը

Հոգու սրրբազան կրրակով վառված
Իջնում էր Մովսես լերան գագաթից,
Իջնում էր ահեղ պատգամներն առած,
Շրղթայից հանող աստուծո մոտից:

Եվ մինչ կանխատես աչքովն իր հոգու
Տեսնում էր գալոցն իր ժողովրրդի,
Եվ մինչ հրճվում էր... ահա ներքևից
Ձայներ բարկության ու խառն աղմուկի...

Ու տեսավ Մովսես լերան բարձունքից,

Ժողովուրդն էնտեղ ներքև, հովիտում
Աստված է շինել ոսկուց, արծաթից,
Պարում է շուրջը ու հարբած գոռում.

«Ինչո՞ւ մեզ բերավ Մովսես անապատ,
Էլի Եգիպտոսից ինչո՞ւ հանեց մեզ...

Ո՞ւր է մեր սրխտորն ու սոխը առատ...
Էնտեղ հանգիստ էր ու լիքն էր էնպե՛ս...»

Գոռում է էսպես ու հարբած պարում:
Ու... սուրբ Սինայի մրոայլ ամպերում
Կանգնեց մարգարեն, նայեց դեպի վեր.

«Մի՞թե այս ամբոխն իմ եղբայրն է, տե՛ր...

Լսում եմ ձայնը դ լեռների գլխին,
Ծովեր եմ պատռում, անցնում անապատ,
Հրդեղեն սյունով տանում իր ուղին,
Նա մի՛շտ կասկածոտ, նա մի՛շտ հուսահատ...

Տանջանքի միջից նրկատում եմ ես
Երկիրն ավետյաց հեռո՛ւ մրշուշում,
Իսկ նա փոքրոգի, կույր ու կարճատես,
Գերության սրխտորն ու սոխն է հիշում...

Եվ երբ ամպերում խոսում եմ քեզ հետ,

Քեզնից փրրկության պատգամ եմ բերում,
Նա այնտեղ ցածում մոլի՛, անհեթե՛թ
Ոսկի է պաշտում ու հարբած պարում...

Ինչո՞ւ են, աստվա՛ծ, քո վեհ պատգամներ,
Իմ տանջանքն ինչո՞ւ...» Գոչեց զայրացած,

Ու մեծ խորհուրդի քարյա տախտակներ
Ժայռերի գրլխից թողեց դեպի ցած...

Բայց... մյուս առավոտ, երբ որ դեռ քրնած,
Հանգչում էր ամբոխն աղմուկից հոգնած,
Իր ցուպը ձեռքին բարձրանում էր նա

Դարձյալ միայնակ վե՜ր՝ դեպի Սինա:

1907